Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2019 թվականի
մարտի 12-ի N 46 -Ա որոշման

ՀԱՅՏ

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Փողոցների հիմնանորոգում
Մարզ	Շիրակ
Համայնքը /համայնքները	Գյումրի
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	125 կմ, 0 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	114000 մարդ (մշտական բնակչություն 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ)
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն	Համայնքը գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է: Ջրամատակարարման ցանցի փոփոխման աշխատանքները ընթացքի մեջ են , որոնք իրականացվում են KFW-ի կողմից: Սիզամարգերի ոռոգման ցանցը բացակայում է: Առկա է փողոցային լուսավորության մոտ 7000 կետ, որոնց քանակը «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի իրականացման ավարտին կհասցվի 11500-ի:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել Գյումրի քաղաքի 6 փողոցների առանձին հատվածներ՝ 1050մ ընդհանուր երկարությամբ և 9880 քառ. մ. երթևեկելի մասով, արևմտյան օղակային շրջանցող ճանապարհը՝ 3500 մ երկարությամբ և 28000 քառ. մ երթևեկելի մակերեսով, մայթեր՝ 5620 քառ. մ ընդհանուր մակերեսով և «Մայր Հայաստան» հուշահամալիրի հարակից տարածքը՝ 5800 քառ. մ ընդհանուր մակերեսով: Այս փողոցները հիմնականում ծայրամասային թաղամասերի փողոցներ են, չեն գտնվում Գյումրու պատմական կենտրոնում, ընդգրկված չեն և չեն էլ կարող ընդգրկվել ՎԶԵԲ ֆինանսավորմամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով նախատեսված

	փողոցաշինության աշխատանքներում: Համաձայն Գյումրու համայնքապետարանի և «Լոջիստիք ԷՖ ԹԻ ՁԻ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված «Փոխըմբռնման հուշագրի» 14-րդ կետի՝ համայնքապետարանը պետք է իր ջանքերը գործադրի «Շիրակ» օդանավակայանից դեպի Լոգիստիկ ԱՏԳ տանող ավտոճանապարհի կառուցումն ապահովելու համար: «Շիրակ» օդանավակայանից դեպի Լոգիստիկ ԱՏԳ տանող ավտոճանապարհի մի հատվածը Գյումրու արևմտյան օղակային շրջանցող ճանապարհն է, որը հիմնանորոգվել է դեռ խորհրդային տարիներին և առնվազն 1988թ. երկրաշարժից հետո վերանորոգման ոչ մի աշխատանք չի իրականացվել: Ներկայումս շրջանցիկ ճանապարհը դժվարանցանելի է, որի պատճառով Մ-7 միջպետական ավտոճանապարհով երթևեկող ծանրաքարշ բեռնատար ավտոմեքենաները անցնում են «Կումայրի արգելոց թանգարանի» տարածքում գտնվող կենտրոնական փողոցներով: Արևմտյան օղակային շրջանցիկ ճանապարհի հիմնանորոգումը և շահագործումը կենսական նշանակություն ունի Գյումրի քաղաքի համար: Հիմնանորոգվելու են փողոցների առանձին հատվածներ՝ իրենց հարակից մայթերով: Սրանք ներթաղամասային փողոցներ են, որոնց մեջ կան նաև դպրոցներին հարող հատվածներ: Այս հատվածներում վերանորոգումներ կատարվել են անհիշելի ժամանակներում: Հիմնանորոգվելու է նաև «Մայր Հայաստան» հուշահամալիրին հարող տարածքը՝ 5800 քառ. մ ընդհանուր մակերեսով: Հուշահամալիրի այս հատվածը գտնվում է անմխիթար վիճակում: Հուշահամալիրի տարածքում չկա պահակակետ և հասարակական զուգարան: Հիմնանորոգումից հետո հուշահամալիրի ընդհանուր տեսքը կդառնա ավելի բարեկարգ:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին	Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք՝ 1. 3500մ Գյումրի քաղաքի արևմտյան օղակային շրջանցող հիմնանորոգված ճանապարհ՝ 28000 քառ. մ երթևեկելի մակերեսով 2. փողոցների 1050մ հիմնանորոգված առանձին հատվածներ՝ 9880 քառ. մ երթևեկելի մակերեսով 3. 5620 քառ. մ մակերեսով հիմնանորոգված մայթեր 4. 5800 քառ. մ մակերեսով հիմնանորոգված հատված հուշահամալիրի տարածքում

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	1. Գնումների գործընթացի կազմակերպում 2. Արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում 3. Աշխատանքների իրականացում և ֆինանսավորում ըստ փուլերի 4. Վերահսկողություն, նախորդ փուլի աշխատանքների ընդունում
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են և իրականացման արդյունքում Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կմեծանա ծրագրի մրցույթի արդյունքում ձևավորված արժեքի չափով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Գյումրի քաղաքի բնակչությունը, Լոգիստիկ ԱՏԳ գործունեություն իրականացնող կազմակերպությունները, Մ-7 միջպետական և Հ-17 հանրապետական նշանակության ավտոճանապարհներով տարանցիկ անցնող կամ Գյումրի ժամանող մեքենաների վարորդներն ու ուղևորները: Ծրագրի իրականացման արդյունքում «Շիրակ» օդանավակայան-Լոգիստիկ ԱՏԳ ճանապարհը կանցնի արևմտյան շրջանցիկ ճանապարհով: Օդանավակայանից Լոգիստիկ ԱՏԳ, ինչպես նաև Մ-7 և Հ-17 ավտոճանապարհներով քաղաք մտնող կամ հակառակ ուղղություններով շարժվող ծանրաքաշ բեռնատար մեքենաները կշրջանցեն քաղաքի կենտրոնական հատվածները: Փողոցների առանձին հատվածները նույնպես ունեն առանցքային նշանակություն: Փողոցները ներթաղամասային են և դրանցից 2-ը հարակից են դպրոցներին, 3-ը՝ դպրոց, գրադարան, մանկապարտեզ տանող ճանապարհի հատվածներ են, իսկ 1-ը՝ արտադրական և առևտրային կազմակերպություններ տանող ճանապարհի հատված է: «Մայր Հայաստան» հուշահամալիրը գտնվում է «Կումայրի արգելոց թանգարանի» տարածքում: Իր նշանակությամբ նաև զբոսաշրջային վայր է: Հուշահամալիրին հարող տարածքի բարեկարգումը, պահակակետի և հասարակական զուգարանի առկայությունն ավելի մաքուր և քաղաքակիրթ վայր կհանդիսանա զբոսաշրջիկների համար:
Ծրագրի	Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն մոտ 50-60

իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ժամանակավոր աշխատատեղեր /շինարարություն, կառուցապատում, բարեկարգում իրականացնողներ/, իսկ ծրագրի ավարտից հետո՝ մոտ 10 հավաքարարի աշխատատեղ:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 3583372000 ՀՀ դրամ .

	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	3583372000	3581470700	99.9
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից	3374554100	3347725300	99.2
- Սեփական եկամուտներ	1346238300	1304602700	96.9
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	113106800	138034600	122.0
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	3708119900	3366973700	90.8
- Վարչական բյուջեի ծախսեր	3177584900	2926239000	92.1
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	530535000	440734700	83.0
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից			
- ճանապարհաշինություն	283267300	206431900	72.8
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	3365000	2906500	86.3
- շենք շինութ. ձեռքբերում	65682000	65542900	99,7
- այլ մեքենաներ և սարքավոր.	161737700	153647500	95,0
-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	3704322300 ՀՀ դրամ ,

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	3704322300
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	3622896300
- սեփական եկամուտներ	1397606000
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	81426000

Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	4043628000
- Վարչական բյուջեի ծախսեր	3277134100
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	766493900
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից	
- Տրանսպորտային սարքավորումներ	249857600
- ճանապարհաշինություն	331457900
- այլ մեքենաներ սարքավորումներ	72575000
- փողոցային լուսավորություն	3365000
- շենք, շինությունների կապիտալ վերանորոգում	81881800

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը: Ֆինանսական միջոցներից մի փոքր մաս էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:
Ծրագրի ընդհանուր բյուջեն	515550000 ՀՀդրամ (100%)
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	231997500 ՀՀ դրամ (45 %)
Այլ ներդրողներ	0ՀՀ դրամ (0 %), նշել ներդրողի անունը:
Ծրագրի իրականացման	Ակիզբ_մայիս_2019 թ. Տևողությունը՝ ...8ամիս....

տևողությունը	
Ծրագրի ծախսերը	Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 515550000 << դրամ, որը հաշվարկվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա:
Ամսաթիվ	"_04_"___մարտի___2019 թ.

Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու **Կարեն Բադալյան**

Հեռախոս, էլ.Փոստ 94/ 90-90-41, badalyan.karen74@gmail.com

Համայնքի ղեկավար **Սամվել Բալասանյան**

(անուն, ազգանուն)

ԿՏ